ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների (Սնանկության դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» հունիսի 2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով և «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով («ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ») նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության ուսումնասիրման, ինչպես նաև դրանց վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև 2019թ. հունիսի 21-ը՝ ժամը 15:00-ն, դիմել պատասխանատու ստորաբաժանմանը՝ առաջարկելով մինչև սահմանված ժամկետի ավարտը տրամադրել համապատասխան եզրակացությունը:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, հիմք ընդունելով նաև սահմանված ժամկետում պատասխանատու ստորաբաժանման կողմից տրամադրված եզրակացությունը, հանձնաժողովը որոշեց. «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և որակավորումը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից հայտարարել «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ին,
2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Գրիգոր Գաբրիելյան

Անդամներ՝ Արման Ղուկասյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան